«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի
պետի տեղակալ _____ Հ. Այունց

ՍՑ-ԳԲԽ-11/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2014թ. N 13.1/1347-14 և 07.02.2014թ. N 13.1/1660-14 գրություններով ներկայացված «Դայա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00117178) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 03.02.2014թ. N 13.1/1347-14 և 07.02.2014թ. N 13.1/1660-14 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Դայա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

2. «Դայա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով 11.02.2014թ. 09/032-207 և 05.03.2014թ. N 09/032-403 գրություններով դիմել է «Դայա» ՍՊԸ-ին:

«Դայա» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած 03.04.2014թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրերով համապատասխանաբար՝ 27.09.2013թ. և 11.11.2013թ. կնքված պայմանագրերով (այսուհետ նաև՝ Պայմանագրեր) նախատեսված ապրանքներն Ընկերության կողմից չեն մատակարարվել, քանի որ ՀՀ պաշտպանության նախարարությունը բանավոր տեղեկացրել է, որ տվյալ ապրանքները մատակարարելու անհրաժեշտությունը վերացել է:

Կենտրոնում 03.12.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Դայա» ՍՊԸ-ի տնօրենը հայտնել է, որ Պատվիրատուն հեռախոսազանգի միջոցով Ընկերությանը տեղեկացրել է, որ տվյալ ապրանքները մատակարարելու անհրաժեշտությունը վերացել է, ուստի Պայմանագրերով նախատեսված ապրանքներն Ընկերության կողմից չեն մատակարարվել, սակայն բերված փաստարկը հիմնավորող որևէ ապացույց չի ներկայացրել:

Կենտրոնի այն հարցին, թե արդյոք Ընկերությունը պատշաճ ծանուցվել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերը միակողմանի լուծելու վերաբերյալ, «Դայա» ՍՊԸ-ի տնօրենը պատասխանել է, որ ծանուցումը ստացել և տեղյակ է եղել Պայմանագրերը լուծելու մասին:

3. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.02.2014թ. ԴՎԱ/354 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել «Դայա» ՍՊԸ-ի հետ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրերով

27.09.2013թ. և 11.11.2013թ. կնքված պայմանագրերը և դրանք միակողմանի լուծելու հիմքերը:

Կարծիք ստանալու նպատակով Կենտրոնը 24.02.2014թ. N 04/032-331 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ միաժամանակ խնդրելով տրամադրել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ Պատվիրատուի գրությունը «Դայա» ՍՊԸ-ի կողմից ստանալու փաստը հիմնավորող ապացույցները, ի պատասխան որի Պատվիրատուն 13.03.2014թ. ԴՎԱ/613 գրությամբ Կենտրոնին է ներկայացրել վերը նշված պայմանագիրը լուծելու վերաբերյալ Ընկերությանն ուղղված 30.01.2014թ. ԴՎԱ/222 գրության պատճենը:

Կենտրոնում 03.12.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրերով սահմանված ժամկետներում ապրանքները չի մատակարարել, ինչի արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Պայմանագրերը միակողմանի լուծվել են:

Կենտրոնի այն հարցին, թե արդյոք Ընկերության կողմից վերականգնվել է պայմանագրային պարտավորությունները խախտելու հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի և տուժանքի գումարները, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերության կողմից նշված գումարները չեն վերականգնվել, ինչպես նաև գումարի բռնագանձման պահանջի մասին կողմերի միջև առկա է ԵԿԴ/0606/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.12.2014թ. վճիռը, որի համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության հայցը բավարարվել է: Դատարանը վճռել է «Դայա» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 778740 ՀՀ դրամ (տուժանք՝ 457760+320980) որպես պարտավորության գումար և 15574 ՀՀ դրամ որպես չվճարված պետական տուրքի գումար:

Պատվիրատուն 17.01.2015թ. ԴՎԱ/81 գրությամբ Կենտրոնին է ներկայացնել վերը նշված վճռի պատճենը:

Կենտրոնը 26.01.2015թ. N 04/032-103 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով սեղմ ժամկետում տրամադրել տեղեկություն՝ Պայմանագրերով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով «Դայա» ՍՊԸ-ի նկատմամբ հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը վերականգնելու վերաբերյալ:

Պատվիրատուն 05.02.2015թ. ԴՎԱ/209 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունից 778740 ՀՀ դրամ տուժանքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի վերոհիշյալ վճիռը հանձնվել է կատարման՝ ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ծառայություն, սակայն վճռի կատարման մասին ԴԱՀԿ ծառայությունը Պատվիրատուին դեռևս տեղեկություն չի տրամադրել:

4. <u>ՍՑ-ԳԲԽ-11/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2014թ. N 13.1/1347-14 և 07.02.2014թ. N 13.1/1660-14 գրություններով «Դայա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Դայա» ՍՊԸ-ի միջև ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 27.09.2013թ. կնքվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր 1):

• Պայմանագիր 1-ի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով և տեխնիկական բնութագրով սահմանված 19 չափաբաժնով նախատեսված գնման ենթակա ապրանքի (այսուհետ նաև՝ Ապրանք) մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2013թ. 4-րդ եռամսյակը:

• Նշված ժամանակահատվածում Ապրանքը չմատակարարելով՝ Ընկերությունը խախտել է Պայմանագիր 1-ով նախատեսված իր պարտավորությունը՝ թվով 19 չափաբաժիններից յուրաքանչյուրի մասով:

• Պատվիրատուն 05.04.2014թ. ԴՎԱ/265 գրությամբ դիմել է «Դայա» ՍՊԸ-ին և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դայա» ՍՊԸ-ի միջև 27.09.2013թ. կնքված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերությունը 2013թ. ընթացքում պետք է մատակարարեր ավտոպա-հեստամասեր:

Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ վերը նշված պայմանագրի 3.1.7 և 7.4 կետերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2014թ. փետրվարի 4-ին միակողմանի լուծում է Պայմանագիր 1-ը:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ նույն ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը պարտավոր է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005240511 հաշվեհամարին փոխանցել 480648 ՀՀ դրամ (չորս հարյուր ութսուն հազար վեց հարյուր քառասունութ), որից 457760 ՀՀ դրամը (չորս հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր վաթսուն) որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, 22888 ՀՀ դրամը (քսաներկու հազար ութ հարյուր ութսունութ)՝ որպես տուգանք պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար (պայմանագրի 7.4 կետի համաձայն):

2. ՀՀ պաշտպանության նախարարության և «Դայա» ՍՊԸ-ի միջև ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 11.11.2013թ. կնքվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր 2):

- Պայմանագիր 2-ի անբաժանելի մասը հանդիսացող N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով և տեխնիկական բնութագրով սահմանված թվով 8 չափաբաժնով նախատեսված գնման ենթակա ապրանքի (այսուհետ նաև՝ Ապրանք) մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 20.12.2013թ.:
- Նշված ժամանակահատվածում Ապրանքը չմատակարարելով՝ Ընկերությունը խախտել է Պայմանագիր 2-ով նախատեսված իր պարտավորությունը վերը նշված թվով 8 չափաբաժնից յուրաքանչյուրի մասով:
- ՀՀ պաշտպանության նախարարությունը 30.01.2014թ. ԴՎԱ/222 գրությամբ դիմել է «Դայա» ՍՊԸ-ին և հայտնել, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դայա» ՍՊԸ-ի միջև 11.11.2013թ. կնքված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրով պայմանագրի համաձայն՝ Ընկերության կողմից 2013թ. ընթացքում պետք է մատակարարվեին ավտոպահեստամասեր:

Պատվիրատուն Ընկերությանը տեղեկացրել է, որ վերը նշված պայմանագրի 3.1.7 և 7.4 կետերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2014թ. հունվարի

29-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է 11.11.2013թ. կնքված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրով պայմանագիրը:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ նույն ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը պարտավոր է 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005240511 հաշվեհամարին փոխանցել 337029 ՀՀ դրամ (երեք հարյուր երեսունյոթ հազար քսանինը), որից 320980 ՀՀ դրամը (երեք հարյուր քսան հազար ինն հարյուր ութսուն) որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում, 16049 ՀՀ դրամը (տասնվեց հազար քառասունինը)՝ որպես տուգանք պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար (պայմանագրի 7.4 կետի համաձայն):

3. Կենտրոնը 18.02.2015թ. N 04/032-262 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժին՝ խնդրելով սեղմ ժանկետում տրամադրել տեղեկություն ԵՇԴ/0606/02/14 քաղաքացիական գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 03.12.2014թ. վճռի կատարման ընթացքի մասին:

4. Ի պատասխան Կենտրոնի 18.02.2015թ. N 04/032-262 գրության՝ ԴԱՀԿ ծառայությունը 09.03.2015թ. ԵԲ-4875/04 գրությամբ հայտնել է, որ կատարողական գործողությունների ընթացքում «Դայա» ՍՊԸ-ի հաշվեհամարից բռնագանձվել է 62798 ՀՀ դրամ (վաթսուներկու հազար յոթ հարյուր իննսունութ), որից 42224 ՀՀ դրամը (քառասուներկու հազար երկու հարյուր քսանչորս)՝ փոխանցվել է ՀՀ պաշտպանության նախարարություն, 15574 ՀՀ դրամը (տասնհինգ հազար հինգ հարյուր յոթանասունչորս)՝ պետական բյուջե, 5000 ՀՀ դրամը (հինգ հազար)՝ որպես կատարողական գործողությունների կատարման ծախս: Պարտապան «Դայա» ՍՊԸ-ի անվամբ գույք և այլ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:

5. <u>ՍՅ-ԳԲԽ-11/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2014թ. N 13.1/1347-14 և 07.02.2014թ. N 13.1/1660-14 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 30.01.2014թ. ԴՎԱ/222, 05.04.2014թ. ԴՎԱ/265, 05.02.2015թ. ԴՎԱ/209 գրությունները, 17.01.2015թ. ԴՎԱ/81 գրությամբ ներկայացված վճիռը, «Դայա» ՍՊԸ-ի 03.04.2014թ. գրությունը, Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ բաժնի ԴԱՀԿ ծառայության 09.03.2015թ. ԵԲ-4875/04 գրությունը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» և «ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» ծածկագրերով կնքված պայմանագրերը, ինչպես նաև Պայմանագիր 1-ը և 2-ը միակողմանի լուծելու հիմքերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշման 7-րդ կետի համաձայն՝ մինչև նույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գնումների գործընթացը սկսելու պահին գործող իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ) 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ նույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագիր 1-ի և 2-ի 1.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում ՀՀ պաշտպանության նախարարությանը կամ նրա կողմից որոշված ստացողին՝ ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությանը մատակարարել նույն պայմանագրերի N 1 հավելվածով՝ գնման ժամանակացույցով և տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանք, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագիր 1-ի և 2-ի 3.1.7 կետի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Ընկերությունն էականորեն խախտել է նույն պայմանագիրը:

Պայմանագիր 1-ի և 2-ի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի մատակարարման ժամկետները:

«Դայա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/17-5» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/19-2» ծածկագրերով պայմանագրերի N 1 հավելվածներով՝ տեխնիկական բնութագրերով և գնման ժամանակացույցերով սահմանված համապատասխանաբար՝ 19 և 8 չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա ապրանքները չմատակարարելով՝ յուրաքանչյուր Պայմանագրի շրջանակներում թույլ է տվել մեկից ավելի անգամ պայմանագրով նախատեսված պարտավորությունների՝ ապրանքների մատակա-

րարման ժամկետների խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից պայմանագրերով ստանձնած վերոհիշյալ պարտավորությունների խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծմանը, որի հետևանքով տուժանքը և հաշվարկված տուգանքը մինչև բողոքարկման խորհրդին սույն եզրակացության տրամադրվելն Ընկերության կողմից չեն վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Դայա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2014թ. N 13.1/1347-14 և 07.02.2014թ. N 13.1/1660-14 գրություններով «Դայա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը (ՀՎՀՀ 00117178) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-11/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան